

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՒՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ներկայ 1897 տարեշրջանի Պուրկարիոյ համար տարեկան 10ֆր " " " 1/2 " 5 " Արտատպանի համար " 12 " " " " 1/2 " 6 " Կանխիկ վճարելի	Համակ դրամ եւայլն խրկել հետեւեալ հասցեով ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԱՌՈՒՆԵՔ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ) Редакция на вѣстникъ „Иравункъ“ ВАРНА (България).	Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie)	Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք ետ չեն դրկուիր եւ յարմար դատ- նաճենքն միայն կը հրատարակ- ուին ամբողջովին կամ մասամբ: Ծանոցմանց տողը 20 սանթիմ. երեքէն առելի անգամներու համար 20 առ 100 գեղը կը լինի:
--	---	--	---

ՈՒՍԱՍԵՐ ԹԷ ԱՆԳԻՍԱՐ

Մեր մէկ քանի յօգուածներուն գէտ, որով ուղած էինք հաստա- տել թէ հայերս, ազատալի փոր- ձառութեամբ մը խորտուած, պօստէինք այսուհետեւ Ռուսիոյ դիմել եւ անոր քաղաքականութեան յարիւ, Արեւմտեան Եւրոպայէն ստա- ցանք եւ մեր 38 եւ 39 թիւերուն մէջ հրատարակեցինք գրութիւն մը, «Որուն դիմելու ենք» խորա- գրով, որուն նպատակն էր ցու- ցնել թէ մենք պարտաւոր էինք եւ ենք ամենէն առաջ Անգլիոյ դիմել եւ թէ Ռուսիոյ ալ համակ- րութիւնը չափել ջանալու ենք ա- մէն կերպով, գիտնալով հանգերձ որ ան մեր ազգութեան թշնամին է:

Հանգամանքները չներեցին մեզ աւելի շուտ պատասխանել այս գրութեան. այսօր կը կատարենք մեր այդ պարտականութիւնը քաջ առ քաջ հետեւելով մեր եզրի պատճառակ բարեկամին առարկու- թիւներուն եւ փաստերուն:

«Մենք դիմեցինք Անգլիոյ, կը- սէ մեր ընդդիմախօսը, որովհե- տեւ ինք հայաստանի բարեկար- գութեան երաշխաւոր էր Պէրլինի դաշնագրով... Անգլին կիպրոսի դաշնագրութիւն մըն ալ կար որ կը դիւրացնէր մեր գիտնումը առ Անգլիա. վասն զի Անգլիա ինչպէս Պէրլինի դաշնագրու- թեամբ Ռուսիոյ ազդեցութե- նէն ազատած էր թուրքիան, նոյն պէս կիպրոսի դաշնագրութեամբ թուրքիա կը գտնուէր Անգլիոյ քաղաքականութեան եւ պաշտպա- նութեան ներքեւ, որով մեզի բա- նաւոր էր մեր պաշտպանութիւնը Անգլիայէ սպասել»:

Կը պատասխանենք.
Այս-Սթէֆանօի դաշնագրին Պէր- լինի դաշնագրին վերածումը եւ կիպրոսի դաշնագրին կնքումը կրնայ գուցէ մասամբ արդարա- ցնել մեր այն սխալը, զոր գոր- ծեցինք մինչեւ հայկական ջար- դերու ժամանակ Անգլիոյ ապաւի- նելով եւ վստահելով, կրնայինք

խորաւիլ եւ խորակցանք իր ներ- գամութեամբ համբաւաւոր Բրի- տանական դիւանագիտութեան խոցերէն: Սակայն հայկական ջարդերէն ետքը՝ երբ անսանք թէ Անգլիոյ համակրութիւնը եւ պաշտ- պանութիւնը ինչ կ'արժէ եւ որ- քան սուղ նստաւ մեզ, պարզա- պէս անմոռութիւն մը կերեւի մեզ դարձեալ Անգլիայէն սպասել մեր փրկութիւնը հիմնուելով Պէրլինի եւ կիպրոսի դաշնագրերուն վրայ: Այլ պէտք է, կարծենք, հասկցած ըլլանք թէ այդ թղթի կտորները նշանակութիւն չունին բնաւ իրր դարձիք հայերու պաշտպանու- թեան Անգլիոյ ձեռքին մէջ, որ գիտէ իր ամենէն նշանաւոր մար- դերուն բերնով ճառական շանթեր արձակել թուրք վարչութեան գէտ, իր նախարարապետին միջոցաւ Սուլթանի դիւանին սպանալ թուրքիան կտոր կտոր բաժնել, եթէ բարձրորդումները չգոր- ծադրուին, բնակու բարձունքէն բերաւոր ունեւոր ժողովրդեան ծափահարութեանց մէջ համակրա- կան եւ քաջաբերական ամենէն ազ- դու բանաձեւերը ուղղել հայ ժո- ղովրդին, յայտ եւ խրախոյս ներ- չընչել անոր եւ այսպէս առաջ մղել հայ յեղափոխութիւնը, իսկ վեր- ջին, վճռական պահուն՝ անխղճօրէն դատաւր ըլլալ ու ձգել որ թուր- քին սուրով եւ քուրդին բերով լուծուի հայկական խնդիրը՝ ինչ- դուած հարկը հազարաւոր հայե- րու արեան ծովին մէջ:

Ամէն մարդկային խիղճ եւ ա- մէն հայու սիրտ զայրոյթ ու զհուսնք միայն կրնան զգալ Անգլիոյ գէտ եւ մենք նախանձելի չենք գտնել ձեր դիրքը, Պարոն ընդդիմախօս, երբ կը ջանաք արդարայնել Անգլիոյ այս անար- գարանալի ընթացքը:

Համաժող ինք ձեզ հետ, երբ մ'ըր գատին սոյալադրութեան զը- խաւոր պտուղաւոր կը գտնէք եւ- ըրպայի քաղաքականութեան ար- գի վիճակին մէջ, որ եթէ հայ- կական գատին նպատաւոր ըլլար, Հայաստան ոչ միայն հուրի եւ սուրի չղրտի մոտանուէր, այլ եւ հաւանականաբար ինքնօրէն վար-

չութեամբ մը օժտուած պիտի ըլլար այսօր:

Շատ լաւ. բայց շատ կարեւոր կէտ մը կայ, զոր երբեք պէտք չէ անստեղծել կորսնցնել: Մար- քիզ Սուրբաբեկի եւ իր խորհրդա- կիցներուն համար դադարիք մը չէր կրնար ըլլալ Եւրոպայի ընդ- հանուր քաղաքականութիւնը, ո- լուն ամէն կարելի հետեւանքները կարող եւ պարտաւոր էին նախա- տեսել, ամէն ինչ հաշուել եւ ապա ճամբայ ելլել: Այդպէս ալ ըրին արդէն. ամէն պատահականու- թիւն աչքի առջեւ ունեցան եւ երբ տեսան որ ամէն պարագայի մէջ Մանչեսթրի բամբակեղէն- ները չեն որ պիտի վաճառէին, այլ հայերը միայն կրնային տու- ժել, անմիջապէս գործի ձեռնար- կեցին. եթէ ձեռնարկը յաջողէր, Անգլիա եւ հայերը պիտի շահէին, իսկ եթէ չը յաջողէր, վնասը մի- այն հայերուն պիտի ըլլար, վնաս մը որ որքան ալ անհար ըլլար, ո եւ է կշիռ չունէր Մ'եմ Բրի- տանիոյ քաղաքական հաշիւներուն մէջ:

Ահա Անգլիոյ ընթացքին ամէն տգեղ կողմը:

Թող արդարայնէ գոյն ու որ կրնայ:

Հարկ չկայ աւելցնելու թէ անգ- լիաներնու կողմէն աններելի պարզամտութիւն կամ կեղծիք մը պիտի ըլլար ըսել թէ Բրիտանիոյ պետական մարդիկ չէին կրնար գուշակել կամ նախատեսել այն ընդդիմութիւնը, զոր Ռուսիա, Գերմանիա, Աւստրիա եւ Ֆրանսա, ամէնքն ալ զանազան հաշիւներով իրեն հակառակորդ եւ թշնամի, կրնային իրեն գէտ յարուցանել հայկական դատին մէջ:

(Շարունակելի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՐԻԶՈՆԸ

Դիւանագիտական արկածալից ու խորակաւոր դաշտին տարող իրականութեանը վրայ այժմ միա- հեծան կը տիրէ իսլամութիւնը: Ամենէն հաստատ կռուաններուն

կառչած, կ'անգոմնէ սպանանքի անգոր շարժումները, որոնք իրեն կուղղուին: Տասնեւիններորդ դա- րավերջը կը բանայ թուրքին առ- ջեւ անանկ լուսաւոր հորիզոն մը զոր դարերէ ի վեր չէր տեսած եւ զոր նոյն իսկ մոռցած էր: Այս արդիւնքը առաջ բերելու համար հարկ էր որ եւրոպեան քաղաքա- կանութիւնը գէպքերու տարօրի- նակ բերումով մը թաւալէր ինտար նմանը շտեմնուած անբարոյակա- նութեան մը եւ արիւնարբու ամ- բարշտութեան մը սեւ վիճը:

Մանուածապատ զձուձ շահեր, սատանայական վարպետութեամբ մը պատրաստուած, անինայ վա- նեցին ինչ որ կար մարդկային սրտին մէջ ազնիւ ու վնասնէն: Իսլամը, որուն նկարագիրը ան- բարոյութեան վրայ հիմնուած է, ցնորական արագութեամբ կրնի- ճուէր պարկիշտ, առաքելի, ան- շահախնդիր քրիստոնէութեամբ զրահուած քաղաքականութեան մը տիրացումին առջեւ: Այս ընթաց- քով պիտի գար օր մը որ Մու- համմէտի հզօր սուրը զլիւովին պիտի փչրուէր՝ աւելի ուժգին բա- խումներէ:

Կշիռը ալալեցաւ սովայն. փը- չող լաստակերտի շուռչմամբ, քրիստոնէական կառավարութեանց բարոյական հիմը կործանեցաւ: Իսլամը, արգէն անբարոյական, յանկարծ իր քովը տեսաւ երբեմն իրմէ շատ բարձր կեցող տարրեր: Անբարոյականութեան հաւատարու- թիւն մը առաջ եկած էր:

Ինչ ըրաւ իսլամը:
Սրամիտ ու խորամանկ, անմիջա- պէս ուզեց օգուտ քաղել բարոյա- կան այս անակնկալ անկումէն, որ իր փրկութիւնը պիտի երաշխաւո- ըէր: Վեր ցատկեց խրտատար, եւ իրաւունք պահանջեց, իրբեւ սովորական արարած Աստուծոյ:

Այս իրաւունքը չլրացուցաւ ի- րեն:

Իսլամութիւնը լայն շունչ մը տուեր էր՝ իր ներքաւը դրած ամ- բարշտութեամբ եղծուած քրիս- տոնայ քաղաքականութեան մը կուրծքին վրայ:

Ու հիմա, երբ աչքդ դարձու-

նես դէպի քաղաքական հորիզոնը, անոր չէկ արեւնագոյն լոյսին մէջ պիտի տեսնես ահաւոր սուր մը որ կը շողայ... Թուրքին ձեռքին մէջ:

Այս ըլլայ թերեւս բարոյական հոգեբանութիւնն ալ մահաշունչ քաղաքականութեան, որ ժանտախտի անողոք սլացումով մարդկային չեղջեր կը հնձէ ու կանայտացնէ:

Փոխանակ իրերու արտաքին խաբէպատիր երեւոյթը դիտելու, երբ աշուղնիս իջեցնենք քաղաքական աշխարհի արդի հանգամանքներուն խորը, ուրիշ բան չպիտի տեսնենք եթէ ոչ կատակերգութիւնը որ միշտ արիւնոռչող տըռամներու տեղի կուտայ և որուն դերակատարները կրնան երեւակայել մէյմէկ կալիքուաներ:

Տոմարի գլխաւոր զոհն է բացի հայէն, յոյն, որ իր քով ունի կրէտացին. բոլոր սլաքները ամեն կողմէ ասոնց կուղղուին. խորամանկ թուրքը անկիւն մը կեցած՝ լայն ժպիտով կը դիտէ այս անլուր եղբայրապանութիւնը:

Եւրոպացի դիւանագէտները կը յոխորտան իրենց ներքամութեան վրայ: Մինչդեռ վատասիրտ ապուշներ են թուրք ամենէն յետին քաղաքագէտին քով որ արեւելեան սրտոնս, թափանցիկ ու խորին ակնոցովը զինուած ուզած կերպովը կը խալցունէ զանոնք: Փոքր օրինակ մը: Պատերազմը դադարէն ի վեր երկու երկար ամիսներ անցան, որոնց միջոցին ամեն ճիգ եղաւ թուրք լէգէտները դուրս հանելու համար թեւալիայէն: Սուլթանը կընդդիմանար՝ յաղթանակի իրաւունքը պահանջելով. երկար, սիրտհատնում նալանքներ, ձգձգումներ, դարձուածքներ, և ահա վերջապէս կընդունուի եղած առաջարկը... Թուրքի վրայ պիտի ելլայ թեւալիայէն, բայց կուզէ գիտնալ թէ տուգանքը մաս առ մաս թէ մէկ անգամէն պիտի հատուցուի իրեն. այս կէտը խնդրի առարկայ կը դառնայ տէրութեանց մէջ: Վեր վար կը դարձունեն, ասդին անդին կը զարնեն, ու մէջէն չեն ելլար: Գերմանիա, քրիստոնեայազգերուն պատուհասը, կը պնդէ որ տուգանքը քիչ քիչ վճարուի, որպէս զի թուրք զօրքերն ալ քիչ քիչ դուրս ելան իրենց գրաւած հողէն:

Միւս տէրութիւնները իբր թէ անմիջական վճարումը կը փափագին, թեւալիոյ անմիջական աւայացման համար:

Մինչ անդին թուրք զօրքերն ու զօրավարները ամէն ժամանակէ աւելի տեղադրուած թեւալիոյ աւերուն ամայի դաշտին վրայ, կուտեն կարբենան, տաճկական քէյփը սարքած, ու խնդալով եւրոպայի քիթին:

Պէտք է գիտնալ որ Սուլթան

նը՝ գործին ամենէն տաք և սուր վայրկենին այնպիսի զիջողութիւններ կընէ որոնք, այդ վայրկեանն անցնելէ ետք, կրնան չիրագործուիլ զանազան պատճառներու ներքեւ: Թեւալիան պարպելու համար ըրած զիջողութիւնն ալ այսպէս է: Դուրս չեկար և այս եղանակով չպիտի ելլայ երբէք:

Գանք կրէտէի. ինչ եղաւ ուր է բարձրագոյն պահանջուած ու խոստացուած ինքնօրինութիւնը: Երբ Սուլթանը մէկ կողմէ զիջումներ ընելու ձեռք կառնէ, միւս կողմէ առաւելութիւններ ձեռք կուզէ բերել. երբ կը խոստանայ թեւալիան պարպել առանց պարպելու, կը տեսնես որ ճշմարտ բաշան կրետէ կարձկէ ընդհանուր կառավարիչ անուանելով զայն: Եւրոպան կընդունի, ու եւրոպան կըլլայ մատնիչ ու դաւաճան:

Անլուր և քստմնելի չէ՞ այս, որուն նմանը աշխարհի սկիզբէն ի վեր չէ աղտոտած պատմութեան էջերը:

Եւրոպական դիւանագիտութիւնը անցնելով այնքան քրիստոնեաներու դիակներուն վրայէն ու արեւն լճակներու մէջէն՝ կերթայ իր ձեռքովը իսլամին առարկ սուրին կը յանձնէ հիւլէն ու կրետացին:

Այս հանգամանքներուն մէջ, ապագան լեցուն է դէպքերով, գուցէ աւելի զարհուրելի և աւելի աշխարհաւեր:

Ե.

ՀԱՅԵՐՆ

Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Ե.

ԹԱԹԱՐ-ԲԱԶԱՐՃԸԳ

Այս փոքր քաղաքը կը պարուենակէ 15,000 բնակիչ և 35 հայ ընտանիք որոնք ունին անշուք ու պղտիկ եկեղեցի մը Ս. Ստեփաննոս անունով և անոր կից՝ խեղճ ու կրակ դպրոց մը, խորէնեան անունով, նեղ, ցած և օդէ զուրկ չէնք մը ուր 18 աշակերտ և 12 աշակերտուհի կը յաճախեն. ասոնց դաս կը տրուի կրօն, մայրենի լեզու, ազգ. պատմութիւն և երգ, սակայն շատ անկանոն կերպով և շատ հինցած մէթոտներով:

Հոգաբարձութիւնը մտադիր է քիչ մը աւելի բարեկարգ շաւղի մէջ դնել դպրոցը յառաջիկայ տարին: Ասոր համար հարկ է ստկայն ամէն բանէ առաջ դպրոցը այժմեան շէնքէն փոխադրել թաղ. խորհրդարանը, որ շատ աւելի օգուէտ է, և հետեւաբար յարմարագոյն իբրեւ դպրոց ծառայելու: Գետոյ՝ պէտք չէ որ հոգաբարձութիւնը յարգէ այն հին սովորու

թիւնը որուն համեմատ տեղին քահանան, որ յաճախ կը փոխուի, դպրոցին տնօրէն նկատուի, որքան ալ անուս և անյարմար մէկն ըլլայ:

Դպրոցին տարեկան ծախքը, 1,200 լէվ, կը գոցուի դպրոցական տուրքով և բանջարեղէնի երկու պարտէզներու եկամուտով: Այդը ունի նաեւ արտ մը, որուն տարեկան 400 լէվ եկամուտովը և բանկային հասոյթովը կը գոցուին քահանային ամսականը և եկեղեցիին ուրիշ ծախքերը:

Գաղթականութեան հոսանքին ժամանակ թաթար-բազարճըգ ալ ունեցել է իր գաղթականաց յանձնաժողովը որ շարաթը անգամ մը շրջագայող յատուկ գանձանակի մը արգելքով, ինչպէս նաեւ հանգանակութեամբ մը 300 լէվ գոյացուցել և այս գումարով օգնել է չքուոր գաղթականներու, որոնց թիւը մինչև 20 հասեր է: Սըր Ուիլիամ Հէյթըր ալ Բլոգոփէն նպաստ զրկած է 120 լէվ և 12 վերմակ:

Գաղթականներէն այժմ մնացած են այստեղ միայն 4 ընտանիք և 10 ամուրիներ, որոնք արդէն գումար գտած են:

Զ.

ԻԱՍԳԵՂ

Այստեղ կը բնակին 21 հայ ընտանիքներ, որոնց 4ը՝ գաղթական և 10 ամուրի պանդուխտներ, որոնց միայն 1ը գաղթական: Հայերը եկեղեցի չունին այստեղ, բայց երկու սենեակէ և պարտէզէ մը բաղկացած տան մը մէջ, որ ազգին սեփականութիւնն է, հաստատած են վարժարան մը կամ ասոր նման բան մը, ուր 15 երկսեռ մանուկներ կը յաճախեն քրիստոնէական և կարգաւ գրել սորվելու համար: Վարժապետին ամսականը, 50 լէվ, կը գոյանայ աշակերտներու վճարած ամսականներէն և ազգայիններու մէջ չըլլա գալուց գանձանակէ մը: Նախորդ ձմեռ վիճակահանութիւն մը կադմակերպուել է, որուն արդիւնքով խառնուրդի ազգայինները կը յուսային նոր վարժարան մը կառուցանել, սակայն վիճակահանութեան արդիւնքը միայն 1,200 լէվ եղած ըլլալով, կը ստիպուին հաւելնալ իրենց այդ դիտաւորութեանէն:

Այժմ որոշած են վերոյիշեալ գումարով արդի հին վարժարանի մէջ հարկուոր նորոգութիւնը ընել և կալուած մը գնել, որուն եկամուտը պիտի յատկանայ վարժարանին:

Խառնուրդ ալ մնացած ձմեռ ունեցել է իր մէկ քանի ուղքատ գաղթականները, որոց բնակութեան վարձքը և ճամբու ծախքը տեղացի ազգակիցները հոգացել են

իրենց մէջ հանգանակելով հարկաւոր գումարը:

Է.

ԿԱՅԱՐԱՆՆԵՐԸ

Պուրկազ-Բլոգոփի երկաթուղիի գիծին գրեթէ բոլոր կայարանները կը գտնուին հայ բնակչութեան, որոնք կը զբաղին արմաթ լեցնելով վակօններու մէջ: Գայալը կայարանին հայ պանդուխտները կաշխատին նոյն տեղի քարահանքին մէջ որ կը հայթայթէ Պուրկազի նաւահանգիստին շինութեան համար հարկաւոր եղած քարը:

Այս ամէն հայաստանցիներ խեղճ վիճակ մը ունին ընդհանրապէս. միայն արմաթի առևտուրի եղանակին մէջ՝ աշխատութիւն կը գտնեն, իսկ տարիին մնացած մասը գրեթէ պարապ կանցընեն, այնպէս որ իրենցմէ քիչերը միայն կարող են երբեմն գումար գրկել իրենց ընտանիքներուն: Իրենց մէկ մասը հունձքի ժամանակ արտահանուելով կերթան 2-3 լէվ օրչէքով: Անշուք բացառութեամբ, ամէնքն ալ Մշոյ դաշտի գիւղացիներ են և միայն Պօրիսովկրատի բնակիչներուն մեծամասնութիւնը Արաբկիրի է:

Ահա այդ կայարաններուն անունները իրենց հայ պանդուխտներու թիւով:

Գայալը 30, Գառնապատ 7, Սիւրալճա 35, Բէրմէնլի 15, Նաւա Զակօրա 10, Ռատնա Մահէլլէ 70՝ որոնց 3ը ընտանիքով, Գարարուար 20, Թրնօլօ-Սէյմէն 4, Գայաճըգ 40՝ որոնց 4ը ընտանիքով, Զիրբան 14, Պօրիսովկրատ 25:

Այս կայարաններէ ոմանց մէջ կը գտնուին նաեւ քանի մը հայ խանութպաններ կամ վաճառականներ:

ԱՆՁԱՏ ՆԻԻԹԵՐ

Հարաւային Պուլկարիոյ զանազան քաղաքներու մասին գրուած նկարագրութիւններուն մէջ ուշադրութիւն կ'ընենք մէկն էր այն պարագան թէ նորեկ հայ գաղթականները, գրեթէ շատ անշուն բացառութեամբ, գտած են մէկ մէկ ապրելու միջոցներ:

Տարակոյս չիկար որ այսպէս պիտի ըլլար վերջապէս: Ոտարը այսօր կը գլխաւոր, վաղը կողորմի, միւս օրը ինքնօգնութեան սկզբունքը կը քարոյժէ, և շատ իրաւամբ: Դուն զնա աշխատէ ու հայրիկ փորան ճարէ՝ կըսէ. բան մը որ արդէն հասկընալու ես ինքնաբերաբար: Բարեբախտապէս, հակառակ կարգ մը տըգէտ իմաստասէրներու անհիմն գնահատմանը, հայը ծոյլ ու գանդալ չէ. ձեռքէն եկածը կընէ

